

ԻՐԱՊԱՏՈՒՄ ԴԵՔԻԱԹ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ն. Խ. ՎԱՐՂԱՆՅԱՆ

Ինչպես բանահյուսական յուրաքանչյուր ստեղծագործության, այնպես էլ հեքիաթի՝ նույնիսկ ամենաանիրական, անհավանական թվացող պատումների հիմքում ընկած են իրական հարաբերություններ ու եղելություններ: Հեքիաթի մեծ շերտերի բացահայտման որոշ դժվարությունները պայմանավորված են ժանրի՝ երբեմնի իրականությունը որպես հորինվածք¹, որպես ժողովրդի երևակայության խաղ ներկայացնելու առանձնահատկությամբ: Վերջին հարյուրամյակում ընդհանուր բանագիտության մեջ հեքիաթի ուսումնասիրման ուղղությամբ կատարված հետազոտությունները զգալի առաջընթաց են արձանագրել հեքիաթի և իրականության առնչությունների բացահայտման հարցում: Մասնավորապես ռուս բանագետների՝ հրաշապատում հեքիաթի հնագույն պատմաագագրական շերտերը բացահայտող աշխատություններից հետո² հեքիաթի այս դասական տեսակի հիմքում իրական, պատմական ճշմարտությունների, մարդկության հասարակական կյանքի այլևայլ իրողությունների առկայության փաստերը բավական հստակություն են մտցրել խնդրի գիտական պարզաբանման մեջ:

Իրականության հետ ունեցած առնչություններով հեքիաթի տեսակները նույն մակարդակում չեն գտնվում: Քննության առարկա իրապատում հեքիաթն այս առումով հանդես է բերում ժանրով պայմանավորված մի շարք առանձնահատկություններ: Նրա անվանումն արդեն հուշում է իրականությանն առավել մոտ գտնվելու հանգամանքը: Ի տարբերություն գերբնական տարրերով հագեցած հրաշապատում հեքիաթի՝ իրապատում հեքիաթն առավել մեծ չափով է արտացոլում իրական կյանքն ու մարդկային հարաբերությունները, ժողովրդի առօրյան ու կենցաղը՝ սոցիալ-դասակարգային հարաբերությունները, պատմական ու հասարակական իրողությունները: Այստեղից էլ բխում է իրապատում հեքիաթ-իրականություն առնչության մի այնպիսի բնութագրական առանձնահատկություն, ինչպիսին է իրականության ուղղակի, առանց այլաբանության պատկերումը³: Իրականության պատկերման հենց այս եղանակով է պայմանավորված իրապատում հեքիաթի և հեքիաթի մյուս տեսակների հիմնական տարբերություններից մեկը: Եթե կենդանական հեքիաթներում մարդն ու մարդկային հարաբերությունները դրսևորվում են այլաբանորեն՝ կենդանիների միջոցով, հրաշապատումում որպես չարի և բարու խորհրդանիշներ հանդես են գալիս անդրաշխարհային գերբնական էակները, ապա իրապատում հեքիաթում հերոսները սովորական մարդիկ են, և

¹ Այս մասին ուշագրավ դիտողություններ ունեն բանագետներ Ն. Հակոբյանն ու Ա. Սահակյանը «Հայկական ժողովրդական հեքիաթների ժանրային տարբերակման հարցի շուրջ» հոդվածում (տե՛ս՝ «Բանբեր Երևանի համալսարանի», 1978, № 1, էջ 132):

² Տե՛ս **В. Я. Пропп**, Исторические корни волшебной сказки, Л, 1986, **Е. М. Мелетинский**, Герой волшебной сказки, происхождение образа, М., 1958 և այլ աշխատություններ:

³ Այստեղից էլ այս հեքիաթների մեկ այլ՝ կենցաղային անվանումը:

⁴ Այս մասին տե՛ս նաև՝ **В. П. Аникин**, Русская народная сказка, М., 1977, էջ 167:

գործողությունները կատարվում են իրական հանգամանքներում, դիպաշարը զարգանում է իրականության ուղղակի պատկերման ճանապարհով:

Մյուս շատ կարևոր առանձնահատկությունն ընդգծված քննադատական վերաբերմունքն է իրականության նկատմամբ, որը երգիծական պատումներում դրսևորվում է սուր ծաղրի միջոցով: Իրականության յուրաքանչյուր պախարակելի երևույթ, որ տեղ է գտնում իրապատում հեքիաթում, արժանանում է ժողովուրդ-ասացողի մերկացնող քննադատությանը՝ լինի դա մարդկային բնավորության այս կամ այն բացասական գիծ՝ անազնվություն, անհավատարմություն, ազահություն, ժլատություն, աչառություն, ծուլություն, թե սոցիալական ու հասարակական այս կամ այն արատավոր երևույթ: Դրան հակառակ՝ գովերգվում են մարդկային դրական և գեղեցիկ հատկանիշները՝ բարությունը, ազնվությունը, առատաձեռնությունը, հավատարմությունը, անաչառությունն ու աշխատասիրությունը:

Կյանքի և հասարակության պատկերները իրապատում հեքիաթներում շատ բազմակողմանիորեն են արտացոլվում: Դրականի և բացասականի հավասարաչափ ցուցադրումը, երբեմն նույն հեքիաթում՝ հակադրության ճանապարհով, արտահայտում է ժողովրդի իդեալներին համապատասխան լավագույն աշխարհի ստեղծման ձգտումը: Դաժան և անխիղճ թագավորների կողքին հեքիաթում հանդիպում են նաև ազնիվ և արդար թագավորներ, աչառու դատավորների կողքին՝ արդարադատ և ազնիվ դատավորներ, անհավատարիմ կանանց կողքին՝ նվիրված ու հավատարիմ կանայք: Առավել սուր է քննադատությունը իրապատում երգիծական հեքիաթներում, երբ արծարծվում են սոցիալական անարդարության կամ հակամարտության թեմաներ, երբ խոսքը հոգևոր դասի և հասարակական վերնախավի ներկայացուցիչների մասին է: Այս պատումներում ժողովուրդը դիմում է երգիծանքի ամենասուր տեսակներին:

Իրականության քննադատությունը, անգամ կյանքի բացասական կողմերի՝ չափազանց իրապաշտ գծերով պատկերումն ու հերքումը երբեք հոռետեսության չի հանգում: Գրեթե բոլոր իրապատում հեքիաթների վերջում արդարության վերականգնումը, բացասական հերոսների կործանումն ու դրականների՝ ժողովրդի աղքատ ու հասարակ մարդկանց երջանիկ ու բարեկեցիկ կյանքի հասնելը իրապատում հեքիաթներում ևս հաստատում են ժողովրդական ստեղծագործությանը հատուկ անսահման լավատեսությունը:

Անդրադառնանք իրականության կոնկրետ արձագանքներին՝ փորձելով պարզել, թե իրականության հատկապես ո՞ր կողմերն են արտացոլվել հեքիաթի այս տեսակում, ո՞ր ժամանակների հետքեր է պարունակում և, ընհանրապես, թե ի՞նչ առանձնահատկություններ է ի հայտ բերում իրապատում հեքիաթը իրականության պատկերման հարցում:

Նախ պարզենք, թե ինչ առնչությունների մեջ է իրապատում հեքիաթը պատմական իրականության հետ: Իհարկե, հեքիաթը անպայմանորեն կրում է պատմական իրականության կնիքը, և իր սյուժեներում որոշակի հիշողություններ է պահպանել պատմական դեպքերի ու իրադարձությունների, պատմական անձանց մասին (այսպես, օրինակ, հայոց իրապատում հեքիաթներում բազմիցս հանդիպում են Սայաթ-Նովայի, Շահ-Աբասի և այլ պատմական անձանց անուններ): Այլ հարց է, որ հեքիաթը պատմություն վերարտադրելու նպատակ չունի, և եղած նմանաբնույթ փաստերը հեքիաթ են մտել անուղղակիորեն՝ իրենց պատմական կոնկրետությունը կորցնելու և հեքիաթի ավանդական դիպաշարերին հյուսվելու ճանապարհով: Պատմականության տեսակետից իրապատում հեքիաթը մեծ արժեք ունի մարդու աշխարհայացքը, մտավոր-հոգեկան զարգացումն արտացոլելու առումով: Իրապատում հեքիաթի ստեղծումը նշանավորում է աշխարհայացքի զարգացման այն փուլը, երբ մարդը որոշ չափով թոթափում է բնության

ուժերից լիակատար կախվածության մեջ լինելու վախը և սկսում է արժևորել իրեն՝ իր ֆիզիկական և մտավոր ունակություններով, գիտակցել իրեն՝ որպես բնության մի մասը: Վաղ շրջանի աշխարհայացքով մարդը մի խաղալիք էր գերբնական ուժերի ձեռքին, և այս շրջանի իրականության հիմքով ստեղծված հրաշապատում հեքիաթում հերոսների փոխարեն հիմնականում գերբնական ուժերն են գործում, առանց որոնց մարդն անգոր է. հաջողության հասնելու միակ նախապայմանը նրա համար անդրաշխարհային հրաշագործ օգնականների ձեռքերումն է: Իրապատում հեքիաթում մարդը հզոր է առանց գերբնական օգնականների, նրա ուժը իր խելքի, տրամաբանության ու ճկուն մտքի մեջ է: Պատահական չէ, որ հետամնաց ցեղերի մեջ, որոնք դեռևս չեն անցել աշխարհայացքի զարգացման այս փուլը և գտնվում են տոտեմական կամ շամանական կրոնական պաշտամունքային փուլերում, իրապատում հեքիաթներ դեռևս գոյություն չունեն՝: Մտավոր զարգացման այս նոր շրջանում ինքն իրեն արժևորել սկսող մարդը նաև գնահատում է իր խելքն ու իմաստությունը: Նախնական մարդու պատկերացումներում խելքի ու իմաստության բուն դրսևորում են համարվել նախ և առաջ հնարամտությունն ու խորամանկությունը: Մարդկային հանճարը փառաբանող հունական անտիկ մշակույթում, օրինակ, դա շատ ցայտուն է դրսևորվել: Հին հույների դիցարանի Հեքմեն աստվածությունը եղել է ճարպիկ և խորամանկ, աչքի է ընկել հնարամիտ գողություններով, որոնց շնորհիվ դարձել է ճարպկության և գողության հովանավորը: Նրա թոռնորդին է եղել հունական էպոսի հնարամիտ հերոսը՝ Ողիսևը՝, որի այնքան փառաբանվող իմաստությունը դրսևորվել է հնարագիտության ու ճարպկության, ստելու ունակության, խորամանկ միջոցներով հաղթություններ տանելու և անելանելի դրություններից ելք գտնելու մեջ:

Այս առնչությամբ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև մ.թ.ա. V դարի պատմագիր Հերոդոտոսը, որը եգիպտական Ռամպսինիտոս թագավորի անվան հետ կապված մի պատմություն է բերում (որի սյուժեն հետագայում պատմվել է որպես իրապատում հեքիաթ - AT 950⁶), թե ինչպես մի ճարպիկ գող թալանում է թագավորի գանձարանը, իսկ հետո նաև այլ հնարամիտ արարքներով աչքի ընկնելով՝ թագավորից ստանում է նրա դստեր ձեռքը: «Ռամպսինիտոսը մեծապես հիանում է և իր դստերը կնության տալիս նրան, իբրև ամենախելացի մարդու, քանի որ եգիպտացիները խելացի են բոլորից, իսկ սա՝ եգիպտացիների մեջ ամենախելացին»,- գրում է պատմագիրը⁷: Ըստ Հերոդոտոսի՝ նախկինում հնարագետ գող է եղել նաև Ամասիսի թագավորը⁸:

Աշխարհայացքի զարգացման հենց այս շրջանում է, որ մարդկության ծիսակարգերում սկսում են մեծ տեղ զբաղեցնել խելքի ու հնարագիտության հետ կապված ծեսերը, ինչպիսիք են սուտասանության և գողության մրցույթները, այլաբանական խոսքերով և հանելուկներով իմաստությունը ստուգելու ծեսերը⁹: Իրապատում հեքիաթների մի սովոր մասը այս ծիսակատարությունների հիմքով են առաջացել: Այսպիսիք են, օրինակ, հմուտ գողի ու ճարպիկ խաբեբայի մասին հեքիաթների մեծ խմբերը (AT 950-969, 1525-1639), ստի մրցումների սյուժեները (AT

⁴ Տե՛ս **В. Я. Пропп**, Русская сказка, Л., 1984, էջ 251:

⁵ Տե՛ս "Мифологический словарь", М., 1991, էջ 151:

⁶ Աարեն-Թումիսն, Ժողովրդական հեքիաթների տիպերը (գործավարական թարգմանություն): Չեռագիրը ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում:

⁷ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Սիմոն Կրկյաշարյանի, Եր., 1986, էջ 135:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 155:

⁹ Տե՛ս **И. М. Колесницкая**, Загадка в сказке.- Уч. зап. ЛГУ. "Серия филологических наук", вып. 12, 1941, էջ 98-142:

1920), այլաբանական հարց ու պատասխանների, տրամաբանական խնդիրների լուծման սյուժեները (AT 851, 875, 921) և բազում ուրիշներ:

Թագավորի ամեն տեսակի դժվար հանձնարարությունները, որ հրաշապատում հեքիաթում կապվում էին քաջության հետ և հաղթահարվում էին հրաշագործ օգնականների շնորհիվ, իրապատում հեքիաթում փոխարինվում են տրամաբանական խնդիրներով, որոնց կատարման համար հերոսից հնարամտություն և ճկուն միտք էր պահանջվում: Այսպես, օրինակ, թագավորը պահանջում է աղջկանից պալատ զալ ո՛չ մերկ, ո՛չ հագնված, ո՛չ ոտքով, ո՛չ հեծած: Աղջիկը փաթաթվում է թոռի մեջ, բռնում է շի պոչից և հասնում պալատ («Խիլըք մշկոյն»¹⁰): Թագավորը վեզիրին տալիս է երկու ոսկի, պահանջում խոյ առնել, նրա մսից մի շիշ քյաբաք պատրաստել, կենդանի խոյին և երկու ոսկին էլ հետ բերել: Իմաստուն աղջկա օգնությամբ նազիրը կատարում է թագավորի պահանջը («Խելացի աղջիկ», հ. XI, № 23): Կամ՝ թագավորը տալիս է հարցեր, որոնց կարողանում է պատասխանել միայն իմաստուն հերոսը. ի՞նչն է աշխարհի ամենաքաղցր բանը՝ սիրել-ապրելը, ի՞նչն է ամենաարագ թռչողը՝ միտքը, ի՞նչն է ամեն բան մոռացնել տվողը՝ քունը, և այլն («Գյուղացու հնարամիտ ախճիզը»¹¹):

Այլ հեքիաթներում թագավորը իր աղջկան կամ հարստությունը խոստանում է նրան, ով կհաղթի ստի մրցույթում («Ստախոս հովիվը»¹², «Սուտ ասողը», հ. VI, № 141), կամ՝ թագավորը իր աղջկան ամուսնացնում է հմուտ գողի հետ («Կյիղը տնունով թաքավորների փեսա» VI, № 521) և այլն: Իրապատում հեքիաթում նույնիսկ երկրների միջև պատերազմները փոխարինվում են խելքի մրցույթներով: Թագավորները իրար տրամաբանական կամ այլաբանական խնդիրներ են ուղարկում, որոնց լուծումը չգտնելու դեպքում պարտվող կողմը պարտավորվում էր հարկ վճարել մյուսին՝ («Բախտն ու չարը», հ. VIII, № 86):

Այս բոլոր հեքիաթներում ակնհայտ է ժողովրդի անթաքույց հիացմունքը դեպի մարդկային խելքն ու հնարամտությունը: Բերված հեքիաթների տիպերը իրապատում հեքիաթի ամենավաղ նմուշներից են, որոնցով էլ, հավանաբար, հենց սկիզբ է առել հեքիաթի այս նոր՝ հրաշապատումին հաջորդող տեսակը (չհաշված, իհարկե, հրաշապատումից առաջացած այն նովելային սյուժեները, որոնք ծագումնաբանորեն առավել վաղ շրջանի ծիսակարգերի ծնունդ են):

Ինչ վերաբերում է պատմական իրականության այլ արտացոլումներին՝ սոցիալ-կենցաղային հարաբերություններ, սովորույթներ, ապա անկասկած այդպիսիք նույնպես մեծ տեղ են գրավում իրապատում հեքիաթում: Այս առումով պետք է ասել, որ հեքիաթի այս տեսակը ժամանակագրական լայն տարածք է ներառում: Ստեղծված լինելով տարբեր ժամանակաշրջաններում՝ այս հեքիաթները իրենց մեջ պահպանել են մարդկության պատմության տարբեր շրջաններին բնորոշ երևույթների գեղարվեստական արտացոլումներ, ժողովրդական կյանքի ու կենցաղի, սովորույթների ու հավատալիքների հարուստ շերտեր: Հին սյուժեների կողքին կան վերջին ժամանակներում ստեղծված սյուժեներ, որոնցից յուրաքանչյուրը

¹⁰ Վերծիհեն Սվազյան, Սուսա լեռ, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), գիրք 16, Եր., 1984, № 27, էջ 92-97:

¹¹ Ավարդ Ղազիյան, Արցախ, ՀԱԲ, գիրք 15, Եր., 1983, դ 19, էջ 68-70:

¹² «Հայ ժողովրդական հեքիաթներ», Եր., հ. I, № 45: Այսուհետև «Հայ ժողովրդական հեքիաթների» ակադեմիական բազմահատորյակից (Եր. 1959-1999) վկայակոչվող բոլոր հեքիաթները կհղվեն շարադրամբում փակագծում նշելով հատորը և հեքիաթի համարը:

Թագավորների՝ միմյանց այլաբանական խնդիրներ և հանելուկներ ուղարկելու սյուժեն պահպանվել է և՛ Հերոդոտոսի «Պատմություն ինը գրքից» աշխատության, և՛ «Երոպոսի կենսագրության» մեջ, որը ևս հաստատում է այս սյուժեի վաղ ծագումը (տե՛ս՝ Հերոդոտոս, նշվ. աշխ., էջ 264, «Երոպոսի առակները» (նուսերենից թարգմանեց Վարդգես Բարսյանը), Եր., 1990, էջ 61-69):

կրում է իր ժամանակի պատմական իրականության արտացոլքը: Այս պատումները մահ շեշտված որակական տարբերություններ ունեն. եթե առաջիններում դեռ բավական մեծ տեղ են գրավում ծիսաառասպելական շերտերը, հնագույն սովորույթների ու սոցիալական հարաբերությունների երբեմն քողարկված դրսևորումները և լեցուն են անհավանական արկածներով, ապա առավել մոտ ժամանակներում ստեղծվածները մոտ են մերօրյա իրականությանը և արտացոլման եղանակով արդեն մեծ աղերսներ ունեն գրական նովելի և պատմվածքի հետ: Իրականության, ժողովրդի սոցիալ-կենցաղային առօրյայի, սովորույթների ու հավատալիքների ճշմարտացի արտացոլումները վերջին տեսակի որոշ պատումներում ստեղծում են հայ ժողովրդի կյանքի հարազատ պատկերներ: Հենց այս՝ առավել ուշ շրջանում ստեղծված իրապատում հեքիաթներն են, որ, հարուստ լինելով ազգային իրականության դրսևորումներով, իրապատում հեքիաթը առանձնացնում են հեքիաթների մյուս տեսակներից՝ որպես ամենից ազգայինը¹³:

Իրականության արտացոլման տեսակետից հետաքրքիր են սոցիալ-դասակարգային հարաբերությունների հետ կապված դիպաշարերը, որոնք տարբեր ժամանակների սոցիալական հարաբերությունների արձագանքներ են պարունակում: Այսպես, օրինակ, հիմար տիրոջ և խելացի ծառայի մասին իրապատում հեքիաթների սյուժեներ պատմվել են դեռևս մ.թ.ա. VI դարում ապրած հայտնի առակագիր Եզոպոսի անվան շուրջ ստեղծված բանահյուսական պատումներում, որոնք մ.թ.ա. II-I դդ. հավաքվել և գրի են առնվել «Եզոպոսի կենսագրություն» վերնագրով¹⁴: Ուշագրավ է, որ այս հեքիաթները հյուսվել են հենց իրական անձանց անունների շուրջ. Եզոպոսը իրականում եղել է Քսանթոսի ստրուկը, որը հետագայում ազատություն է ստացել: Բավարար հիմքեր չունենալով պնդելու, թե այս հեքիաթները հենց ստրկատիրական հասարակարգի պայմաններում են առաջացել, համեմայնդեպս կարող ենք ասել, որ դրանք ամպայմանորեն կրում են այդ ժամանակաշրջանի կնիքը: Ուշագրավ է, որ ուսումնասիրողը «Կենսագրությունը» համարում է մ.թ.ա. VIII-VI դդ. հասարակական պայքարի դրամատիկ դարաշրջանի կենդանի հիշողություն, որտեղ ստրուկն անարգում է ազատներին¹⁵: Սոցիալ-դասակարգային հարաբերությունների հետագա զարգացումները ստեղծում են հարուստի ու աղքատի պայքարի այլաբնույթ սյուժեներ, սոցիալական հակամարտության թեման հարստանում է նոր մոտիվներով ու նոր հարաբերություններով՝ հասարակ մարդ-պալատական, գյուղացի-վաճառական և այլն, և ամենուր արտահայտվում է ժողովրդի ձգտումը՝ վերականգնել արդարությունը, խմբագրել կյանքի անարդար օրենքները՝ զոհե հեքիաթներում պատժելով և ծաղրելով վերնախավի ներկայացուցիչներին, տռնելով աղքատի հաղթանակը անազնվորեն հարստացածների նկատմամբ:

Իրապատում հեքիաթում պահպանված պատմական հնագույն ժամանակներին բնորոշ հասարակական հարաբերությունների հետքերից ուշագրավ են մայրիշխանության ժամանակաշրջանին բնորոշ *ափունկույատի* (կնոջ եղբոր սոցիալական դերը՝ որպես քրոջ և նրա զավակների պաշտպան, տոհմային զինվոր և որսորդ) արձագանքները: Բավական մեծ թվով հեքիաթների առանցքը քեռի և քեռորդի հարաբերությունների պատկերումն է. երբեմն որպես թագավորի ժառանգներ հանդես են գալիս ոչ թե նրա որդիները, այլ քեռորդիները («Իրեք հարց», հ.

¹³ Տե՛ս, օրինակ, **Ю. И. Юдин**, *Своеобразие историко-художественной проблематики русских бытовых сказок о шутах*, "Проблемы историзма в художественной литературе" գրքում, Курск, 1975, էջ 5:

¹⁴ Տե՛ս «Եզոպոսի առակները», էջ 5-75:

¹⁵ Տե՛ս Մ. Լ. Գասպարովի «Եզոպոսի առակները» հոդվածը համանուն գրքում, էջ 278:

VIII, № 137): Շատ տարածված է քեռու և քեռորդու՝ միասին գողություն կատարելու սյուժեն, ուր հիմնականում քեռին համոզես է գալիս որպես քեռորդու ուսուցիչը, թեև վերջինս շուտով իր հմտությամբ գերազանցում է նրան: Սյուժեներից մեկում մայրը որդուն տարբեր արհեստների է տալիս, սակայն վերջինս ոչ մի տեղ երկար չի մնում: Ի վերջո մայրը որդուն ուղարկում է իր եղբոր մոտ, որպեսզի վերջինս տղային գողություն սովորեցնի («Կյ՞ղը տնտնավ թաքավրերի փեսա», VI, № 123): Մեկ այլ հեքիաթում, դարձյալ քեռու խորհուրդներին հետևելով, երկու քեռորդիները հմտորեն թալանում են թագավորի գանձարանը («Հնարագետ գողն ու միամիտ թագավորը», VIII, № 106): Հայտնի է, որ մայրիշխանության շրջանում քրոջ զավակների համար հոր դեր կատարող քեռին էր հենց հովանավորում երեխաներին նվիրագործման ծիսական համակարգին մասնակցելիս¹⁶: Ճարպկորեն կատարվող գողությունը, ինչպես նշեցինք, նախնադարյան արարողակարգերում եղել է քաջությունը և հնարամտությունը ցուցադրելուն նպատակաուղղված մի ծես: Կարելի է ենթադրել, ուրեմն, որ քեռուց գողություն սովորելու դիպաշարը հենց այս ժամանակների պատմական հիշողություն է. հասունացման և անցումային տարիքում ծիսական փորձությունները հարթահարելու համար անհրաժեշտ հմտությունները, որոնք հենց նվիրագործման բուն էությունն էին կազմում, ձեռք են բերվում քեռու օգնությամբ:

Հավանաբար քեռու կողմից քեռորդուն հովանավորելու նախնադարյան սովորության հետ են կապվում նաև այն իրապատում հեքիաթները, որոնցում անբարո վարքի տեր քեռակինը իրենց ունեցվածքի նվազելու մեջ մեղադրում է ամուսնու քրոջը և նրա որդուն: Քեռորդին, որի դերում սովորաբար համոզես է գալիս հնարագետ Քաչալը, վրեժ է լուծում քեռակնոջից, սպանում նրա սիրելեակին և քեռակնոջը մատնում՝ որպես մարդասպանի («Քաչալ Պուղեսը», հ VII, № 184, «Պրկափոխան կնիկը», հ. VIII, № 108, «Քեռին ու խուարզոն» հ. XII, № 8):

Որոշ իրապատում հեքիաթներում քեռու կերպարը փոքր-ինչ ծաղրաբար է ներկայացվում: Քրոջորդուն գողություն սովորեցնող քեռին բարձրանում է ծառը և թռչնի տակից աննկատ գողանում նրա ձագին: Երբ իջնում է ծառից, տեսնում է, որ քրոջորդին էլ աննկատ հանել է իր շալվարը: Քեռորդու հետ գողություն անող քեռին հաճախ ընկնում է կուպրով լցրած հորի մեջ ու չի կարողանում դուրս գալ: Քեռորդին կտրում է քեռու գլուխը, վերցնում այն և փախչում («Շնագլիղ Մուխանը», V, № 47, «Քաչալին հաքյաթը», VI, № 37, «Բալան ու Փխչոն», XIII, № 53):

Ավունկուլատի դիտարկումը ի հայտ է բերում մի շարք նորություններ, որոնք արտացոլվել են այս իրապատում հեքիաթներում: Այսպես. հարավային աֆրիկացիների հարաբերություններում մորեղբոր դերն ուսումնասիրած Ռեդկլիֆ-Բրաունը ավունկուլատը բաժանում է երկու հակադիր համակարգերի. մի դեպքում քեռին ընտանիքի գլուխն է, նա քեռորդու վրա մեծ իշխանություն ունի, մյուս դեպքում նրանց հարաբերությունները շատ ազատ են ու ընտանի, և քեռորդին քեռու հետ կարող է վարվել որպես զոհի: Վերջին տեսակում առավել մեծ իշխանություն է պատկանում հորը¹⁷: Ուշագրավ է, որ Պուլինեզիայում, օրինակ, մինչ քեռու և քեռորդու հարաբերություններում լիակատար ազատություն էր իշխում, որդու և հոր միջև գործում էին որոշակի տաբուներ, որոնք ոչ մի դեպքում չէր կարելի խախտել:

¹⁶ Sh'u E. M. Мелетинский, Герой волшебной сказки, происхождение образа, М., 1958, էջ 33:

¹⁷ Sh'u A. M. Radcliff-Brown, The mother's brother in South Africa, "South African Journal of science", vol. 21, 1924, էջ 19-24, նաև՝ К. Леви-Строс, Структурная антропология, М., 1983, էջ 42:

Այս տարբերակի թվին էր պատկանում հոր գլխին ձեռք չտալու արգելքը¹⁸: Շատ հավանական է, որ այս տարբերակի գոյությունը որոշակի դեր է խաղացել վերոհիշյալ հեքիաթներում քեռորդու՝ քեռու գլուխը կտրելու մոտիվի ստեղծման մեջ:

Որպես հնագույն պատմական սովորույթների՝ իրապատում հեքիաթում արտացոլման փաստ մեծ հետաքրքրություն են ներկայացնում ծերերին սպանելու սովորույթի շուրջ հյուսված դիպաշարերը (AT 981): Այսպես, մի հեքիաթում որդին հորը զանբյուղով տանում է և ժայռից ցած գցում: Երբ նա ծերանում է, նույն կերպ էլ իր որդին է ուզում վարվել: Սակայն հոր ակնարկից հասկանալով, որ նույնը և իրեն է սպասում, զոջում և ետ է տանում հորը («Հայր և որդի», հ. VI, № 58): Մեկ այլ դեպքում թագավորը հրամայում է սպանել երկրի բոլոր ծերերին, մի տղա խղճում է և թաքցնում իր հորը: Թագավորության համար ծանր մի պահի ակտորը իր խորհրդով փրկում է դրությունը, որից հետո ծերերին այլևս չեն սպանում («Ճուլավարանը ետ տար, քեզ էլ ա հարկավաճեր կյիլական», հ. VII, № 113, «Ամենախելոք մարդը», հ. VIII, № 104):

Նախնադարյան-տոհմատիրական հասարակարգում իրոք գոյություն է ունեցել ծերերին սպանելու ծիսական մի սովորույթ. հասարակությունը չի կարողացել ապահովել անաշխատունակ ծերերի կենսական պայմանները և նրանց մահվան են մատնել: Ամենայն հավանականությամբ այս սովորույթի հետ է կապվում նաև Մարդոնիայում կատարվող այն ծեսը, ըստ որի ծերերին սպանելիս մարդիկ բարձր ծիծաղել են՝ հավատալով, թե հմայական կենսաստեղծ նշանակություն ունեցող այդ ծիծաղով նոր կյանք են շնորհում սպանվողներին¹⁹: Բերված հեքիաթներում արտացոլվել են ծերերին սպանելու պատմական այս սովորույթն ու նրա վերացման բարոյահոգեբանական դրդապատճառները²⁰:

Ծերերին կամ հիվանդներին սպանելու մեկ այլ սովորույթ է պահպանվել նաև իրապատում այն սյուժեում, որտեղ անմահություն որոնող ամուսինները փնտրում են մի այնպիսի երկիր, ուր մարդիկ չեն մահանում: Վերջապես գտնելով գերեզման չունեցող մի երկիր՝ բնակություն են հաստատում այնտեղ: Մի օր տուն գալով՝ ամուսինը տեսնում է, որ երեխաները լալիս են, իսկ կինը չկա: Պարզվում է, որ հարևանները կնոջը մորթել և կերել են, որովհետև նա գանգատվել է գլխացավից: Երկրի՝ գերեզման չունենալու գաղտնիքն ուրեմն հենց այդ էր («Մարթին հու կնգանը հաքյաթը», հ. VI, № 30): Այս հեքիաթը ևս խիստ իրական, պատմական հանգամանքների հիմքով է առաջացել: Մարդակերության սովորույթը նախնադարում շատ տարածված է եղել: Հերոդոտոսը իր պատմության մեջ բերում է մի փաստ, որն ուղղակիորեն առնչվում է հիշատակված հեքիաթին: Հնդիկների՝ պաղայներ կոչվող մի ցեղի մասին նա գրում է, որ նրա անդամները իրենց հիվանդ ազգականներին մորթել են և կերել, իսկ ծերերին զոհաբերել են և նոր միայն կերել, թեև ծերության տարիքի նրանցից շատ քչերն են հասել թեթև հիվանդության դեպքում անգամ մորթվելու պատճառով²¹: Ինչպես տեսնում ենք, հեքիաթում բավական հարազատորեն պահպանվել են այս սովորույթի հիշողությունները:

Հնագույն և մոռացված պատմական իրողությունների ու սովորույթների կողքին իրապատում հեքիաթում առկա են բոլորովին նոր ժամանակների ազգագրական շերտեր՝ սովորույթներ ու հավատալիքներ, որոնք կենդանի են ընդհուպ մինչև մեր օրերը և կենցաղավարել են ժողովրդի մեջ նույնիսկ այն ժամանակ, երբ

¹⁸ Տե՛ս **К. Леви-Строс**, *Նշվ. աշխ.*, էջ 44:

¹⁹ Տե՛ս **В. Я. Пропп**, *Фольклор и действительность*, М., 1976, էջ 188-189:

²⁰ Այս մասին տե՛ս՝ **Ա. Վազիյան**, Հնագույն մի սովորույթի արձագանքները հայ քանադարյան մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 2, էջ 275-280:

²¹ Տե՛ս **Հերոդոտոս**, *Նշվ. աշխ.*, էջ 199:

պատմվել են որպես հեքիաթ: Ինչպես արդեն վերը նշեցինք, առավել նոր ժամանակներից իրապատում հեքիաթ մուտք գործած իրականության շերտերը՝ կենցաղային պատկերներն ու սովորույթները, հիմնականում կրում են ազգային կյանքի ազդեցությունը: «Յուրաքանչյուր ժողովուրդ ունի կենսակերպի, մշակութային ավանդույթների, աշխարհընկալման, բնավորության դրսևորումների ոչ սակավ առանձնահատկություններ, որոնք հատուկ են միայն իրեն: Եվ այս ամենը տեղ է գտնում հեքիաթում: Այնպես որ, ի վերջո, յուրաքանչյուր հեքիաթ, որքան էլ որ նման լինի ինչ-որ ուրիշ մեկի, ազգային է»²², - գրում է Վ. Բախտինը: Այսպես էլ հայոց իրապատում հեքիաթներում տեղ են գտել հայ ազգի կենցաղին, սովորույթներին և ընդհանրապես ազգային բնավորությանը բնորոշ դրսևորումներ, էլ չենք խոսում այն իրապատում հեքիաթների մասին, որոնք, զուտ ազգային լինելով, բացակայում են միջազգային հեքիաթների սյուժեների ուղեցույցներում, թեև պետք է նշել նաև, որ այսպիսիք մեծ թիվ չեն կազմում:

Հայոց իրապատում հեքիաթներում շատ են հայ ընտանեկան կենցաղի, ներընտանեկան հարաբերությունների և սովորույթների բնորոշ պատկերումները: Դրանք մեծ տեղ են զբաղեցնում ներընտանեկան հարաբերություններ արտացոլող հեքիաթներում, որոնց մեջ քիչ չեն հայ ավանդական ընտանիքներում ընդունված փոխհարաբերությունների նկարագրությունները: Այս իրապատում հեքիաթների մի մասը մեծ հարազատություն ունի 19-20-րդ դարերում գրի առնված հայ ազգագրական նյութերի՝ ազգային կենցաղի և ընտանեկան փոխհարաբերությունների նկարագրությունների հետ:

Այսպես, մի շարք իրապատում հեքիաթներում առկա է հարսի չխոսկանության սովորույթը²³, ըստ որի նոր հարսը իր հարսնության առաջին տարիներին իրավունք չուներ խոսելու ո՛չ սկեսորի և սկեսրայրի, ո՛չ էլ ընտանիքի մյուս չափահաս անդամների հետ՝ բացառությամբ տալերի և փոքր երեխաների: Ջավախքում, օրինակ, նոր հարսը չէր խոսում «...կեսորի հետ 3, կեսրարի հետ 10-12, տեգերկնիկների հետ մինչև մի, տեգրի հետ 15, և կնքավորի հետ 25-30 տարի, մինչև անգամ մինչև մահ...»²⁴: Մոտավորապես նույնն է եղել դրությունը նաև մյուս ազգագրական շրջաններում:

Իրապատում որոշ դիպաշարեր հյուսվել են հենց այս սովորույթի շուրջ: Այսպես, ամուսնացած հարսը, մոր խորհրդին հետևելով (մայրը նրա ծոցը մի քար էր գցել և ասել, որ այդ քարի պես լուռ մնա), մի քանի տարի շարունակ չի խոսում, և նրա ամուսինը կարծում է, թե նա համր է: Դժգոհ ամուսինը, կնոջը շատ սիրելով հանդերձ, այնուամենայնիվ որոշում է մեկ ուրիշ կին էլ բերել, որը համր չի լինի: Նոր հարսին տեսնելով՝ «համրը» խոսում է, և ուրախացած ամուսինը ետ է տանում նոր կնոջը («Ծուցեն քարը» VII, № 145, «Կեսրանց տանը չխոսող հարս», հ. XIV, № 67): Մեկ այլ հեքիաթում դարձյալ կնոջը համր կարծող ամուսինը մի ծեր մարդու խորհրդով հետևում է, թե արդյո՞ք կինը խոսում է երեխաների հետ, և տեսնելով, որ դա այդպես է, համոզվում է, որ կինը իրոք համր չէ («Քյաչլու խեքաթ»²⁵):

²² В. Бахтин, Русская бытовая сказка, Л., 1987, էջ 5:

²³ Խոսել-չխոսելու սիմվոլիկան առասպելական մախնական սյուժեների համատեքստում զուգորդվում էր կենդանի-մեռած հասկացություններին, համապատասխանաբար՝ ինչպես ծեսերում, այնպես էլ դասական հեքիաթում հերոսի լռությունը համարվում էր նրա մեռած լինելու վկայություն, իսկ խոսելը՝ վերածնվելու: Մի շարք նովելային հեքիաթներում նորահարսի չխոսկանությունը դեռ իր հին իմաստավորումն է պահել, սակայն որոշ դեպքերում հին իմաստի խամրումը տեղիք է տվել մինչև վերջին ժամանակներս հայոց մեջ պահպանվող այս սովորույթի նոր իմաստավորմանը՝ չխոսկանությունը որպես հարսի անթխածության և պարկեշտության առհավատչյալ:

²⁴ Երվանդ Լալայան, Երկեր, հ. 1, Եր., 1983, էջ 178:

²⁵ Տե՛ս Ռոզա Գրիգորյան, Գեղարքունիք, ՀԱԲ, գ. 14, Եր., 1999, էջ 105-106:

XIX դարի հայոց կենցաղին բնորոշ են եղել մահապետական բազմամարդ գերդաստանների՝ սոցիալ-կենցաղային զանազան հանգամանքներով (ընտանեկան վեճեր, ընդհարումներ) պայմանավորված տրոհումներ²⁶: Այս գործընթացի արձագանքները գտնում ենք մահ հայոց իրապատում հեքիաթներում, ուր ևս, ինչպես որ իրականում, ընտանիքների բաժանությունների պատճառ են դառնում տեգերկամանց վեճերը («Եղբայրները», հ. VI, № 62), եղբայրների անհամերաշխությունը («Մընծ ախալերը նան կուճուր ախալերը», հ. VII, № 40), հարսի և սկեսրայրի կամ սկեսուրի հակամարտությունը («Կուճուր հառթնը», հ. VII, № 35) և այլն: Հեքիաթներում ժողովուրդը իր բացասական վերաբերմունքն է արտահայտել այս երևույթի նկատմամբ. որոշ հեքիաթներում ընտանիքում վեճ հարուցող անդամը պատըծվում է, և մեծ գերդաստանը շարունակում է իր գոյությունը: Իսկ եթե, այնուամենայնիվ, բաժանումը կայանում է, ապա անպայման բացասական հետևանքներ է ունենում նախապես բաժանվել ցանկացող կողմի համար:

Այսպես, օրինակ, «Եղբայրներ» (հ. VI, № 237) հեքիաթում շատ համերաշխ ապրող յոթ եղբայրները նախքան ամուսնանալը որոշում են, որ ոչ մի դեպքում թույլ չեն տա ապագա կանանց բաժանել իրենց: Ամուսնանալուց հետո փոքր եղբոր կինը տանը անհամերաշխություն և կոիվ է գցում: Պարզելու համար, թե ո՞ր հարսն է տան վեճերի պատճառը, մեծ եղբայրը բաժանության հարց է բարձրացնում, և մինչ մյուս հարսները լալիս են, փոքր հարսը սկսում է իրերը հավաքել, որ բաժանվեն: Եղբայրները պատժում են փոքր հարսին և շարունակում համատեղ ապրել:

Հայոց իրապատում հեքիաթներում հայ կենցաղին բնորոշ դրսևորումներ են մահ որդեժնության հետ կապված սովորույթներն ու հավատալիքները: Օրինակ, հայոց կենցաղում շատ տարածված բացօթյա և ինքնուրույն ծննդաբերության դեպքերը, որ պատկերվել են հայ գրողների ստեղծագործություններում (Մնձուրու «Առջինեկ» պատմվածքում, Վ. Թոթովենցի «Կյանքը հին հոովմեական ճանապարհի վրա» երկում), տեղ են գտել մահ իրապատում հեքիաթներում: Հղիության մինչև վերջին օրը աշխատելով՝ շատ է պատահել, որ հայ կանայք ծննդաբերել են հենց դաշտում՝ առանց որևէ մեկի օգնության: Այսպիսի դեպքերի առատության պատճառով Գամձակում, օրինակ, շատ սովորական է եղել «քոլում ծնված» մականունը²⁷: Մի հեքիաթում հորանց տուն գնացող հարսը, ամաչելով որևէ մեկին բան ասել, առանձնանում է քարայրում, ծննդաբերում և, երեխային թողնելով տեղում, գնում է տուն: Տան անդամները գալիս և տուն են տանում նորածնին, որին հարսի աղոթքով կեր էր սովել եղնիկը («Ամոթով հարսը», հ. II, № 43):

Որոշ հեքիաթներում տեղ է գտել տղաբերքի հետ կապված ժողովրդական այն հավատալիքը, ըստ որի եթե հղի կինը ինչ-որ բան ուտելու ցանկություն է ունենում, դա երեխայի պահանջն է, այդ պատճառով այն շտապ պետք է բավարարել²⁸: Իրապատում մի շատ տարածված սյուժե կա, ուր թագավորի հղի կինը գետնից մի ցեխոտ նռան հատիկ է վերցնում և ուտում: Թագավորը հրամայում է սպանել կնոջը այս արարքի համար, և երբ նրան սպանում են, տեսնում են, որ նռան հատիկը երեխայի բերանում է («Թագավորին կնգանը հաքյաթը», հ. VI, № 34): Ըստ մեկ այլ հավատալիքի՝ ծնվելիք երեխան կունենա նրա բնավորությունը, ում առջև որ մոր փորում խաղացած կլինի, այդ պատճառով մայրերը զգուշանում էին,

²⁶ Տե՛ս Պրոֆ. Խ. Մամուկյան, Հին Հայաստանի կուլտուրան, Երրորդ հատոր, Եր., 1941, էջ 198-201:

²⁷ Տե՛ս Երվանդ Լալայան, Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ, «Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի», Եր., 1931, № 5, էջ 130:

²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 124:

որ երեխան չխաղա թուրքի, շան կամ էշի առջև գտնվելիս»²⁹: Իրապատում մի սյու-
ժետում շատ սրամիտ դրսևորում է գտել այս հավատալիքը: Մի մարդ թագավորին
ասում է, որ նա «հշու պես մարդ է», որովհետև անմիտ և համառ քայլեր է անում:
Որպես ապացույց նա կանչել է տալիս թագավորի մորը, որպեսզի նա ասի, թե ար-
դյոք թագավորը էշի դեմ խաղացել է: Թագավորի մայրը խոստովանում է, որ դա
իրոք այդպես է («հշու դեմ խաղացած թագավորը», հ. X, № 58):

Բազմաթիվ իրապատում հեքիաթներում տեղ է գտել հայոց մեջ կատարվող
որդեգրման հետ կապված մի սովորություն, որի ժամանակ երեխային անց էին
կացնում ապագա մոր շորերի միջով («Սուլթան Մուրադ թագավորի հեքիաթը» հ.
VI, № 93, «Քազրկանի հոգեորդու հեքիաթը», հ. VIII, № 34): Սովորությունը պայ-
մանավորված էր հնագույն այն հավատալիքով, ըստ որի ինչպես մարդու մարմնի
մի որևէ մաս, այնպես էլ նրա մի որևէ իրը կամ հագուստը խորհրդանշում էր հենց
իրեն՝ տվյալ անձնավորությանը՝ մասը ամբողջի փոխարեն սկզբունքով: Երեխա
որդեգրելիս կատարվող այս ծեսը հայերի մեջ ընդունված է եղել մինչև վերջին ժա-
մանակները³⁰: Շապիկի միջով անցկացնելը խորհրդանշում էր երեխայի ծնունդը
ոչ հարազատ ծնողներից: Հեքիաթը անաղարտ է պահել ժողովրդական այս սովո-
րությունը: Նշենք, որ սովորույթի խորհուրդը հեքիաթասացների կողմից պարզո-
րոջ գիտակցվում է. «Բերում են էդ բազրկանի կնգա շապիկի միջովը անց կաց-
նում, որ միթան թե ծնվեց», -մեկնաբանում է ասացողը (հ. VIII, էջ 251):

Հագուստի և այն կրող անձի նույնացման հավատալիքն է հիմք դարձել նաև
մի այնպիսի սովորության, ինչպիսին է հիվանդ երեխային առողջ երեխայի շորեր
հագցնելը՝ վերջինիս ֆիզիկական հատկությունները առաջինին փոխանցելու
նպատակով³¹: Իրապատում հեքիաթներում հանդիպում են նաև այս սովորության
հեռավոր արձագանքները. շատ տարածված մի դիպաշարում տխուր թագավորին
ուրախացնելու համար իմաստունները խորհուրդ են տալիս մի ուրախ մարդու շա-
պիկ հագցնել: Ուրախ մարդ կամ չի գտնվում, կամ էլ գտնված միակ մարդը ծայ-
րաստիճան աղքատ է լինում, հաց կերած լինելով՝ ուրախ է լինում, բայց շապիկ
չի ունենում («Դիտուր թակավերը»³², «Աշխարքունս անդարդ մարդ կա ոչ»³³):

Իրապատում հեքիաթներում առկա ժողովրդական կյանքի այլաբնույթ ար-
տացույցներից հետաքրքիր է նաև դատարանում երդում տալու սովորույթը, որ
գործում է մինչ օրս, իսկ ոչ հեռավոր անցյալում շատ ավելի կարևոր դեր է ունե-
ցել: Ազգագրական նյութերից հայտնի է, որ Ղարաբաղում դատավարության ժա-
մանակ հասարակայնորեն երդման արարողություն էին կազմակերպում, և մե-
ղադրյալը պետք է խաչի մոտ երդվեր՝ իր անմեղությունը հաստատելու համար³⁴:
Իրապատում մի շարք դիպաշարերում շատ սրամիտ դրսևորում է գտել այս սովո-
րույթը. ճարպիկ գողերը գողություն անելիս նախօրոք այնպես են վարվում, որ
դատարանում կարողանան երդմամբ հաստատել իրենց անմեղությունը: Օրի-
նակ, հենց դարաբաղյան հեքիաթներից մեկում երկու ընկեր գողություն են կա-
տարում: Նրանցից մեկը կանգնում է մյուսի ուսերին և քաղում վարունգները: Դա-
տարանում, երբ գողերին ստիպում են ավետարանի վրա երդվել, մեկն ասում է.
«Թե իմ վրեսը քու խիյարկուտը մտած, կոխած ըլի, իմ ընեսքը կտորվեն», մյուսն էլ

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 124:

³⁰ Տե՛ս, օրինակ, «Ծիսական կարգերը հայոց մեջ», Ըստ Սպենսերի կազմեց Ե. Լալա-
յան, Ա. պրակ, արտատպված «Ազգագրական հանդեսից», Թիֆլիս, 1913, էջ 33:

³¹ Նույն տեղում, էջ 24:

³² Տե՛ս Հակոբ Գուրունյան, Համշենի քանաչություն, Եր., 1991, էջ 101-102:

³³ Տե՛ս Թամար Գևորգյան, Լոռի, ՀԱԲ, գ. 20, Եր., 1999, էջ 118, № 49:

³⁴ Տե՛ս Степан Лисицян, Армяне Нагорного Карабаха, Ер., 1992, էջ 166:

երդվում է. «Թե իմ կուտը քու խիյարը պուկած ըլի, իմ ըխեսքն էլ կտորվեն»: Այդպիսով սրամիտ գողերը ազատվում են պատժից («Դուզ վերթըմ ուտողնին», VI, № 149):

Առանձին փաստերից բացի՝ ազգային հոգեկերտվածքի ու բնավորության այս կամ այն գծի՝ առավել շեշտված լինելու մասին են խոսում որոշ սյուժեների եթե ոչ բացառապես ազգային լինելը, ապա ազգային հեքիաթացանկում դրանց տարբերակների առատությունը: Այսպես, օրինակ, հայկական հեքիաթացանկին շատ բնորոշ են հյուրասիրության թեմայի հետ կապված բազմաբնույթ դիպաշարեր, որոնք աչքի են ընկնում տարբերակների մեծ քանակությամբ: Բազմաթիվ են հատկապես երգիծական այն հեքիաթները, որոնցում ծաղրվում են ժլատ և անհյուրասեր տանտերերը (օրինակ՝ «Լազի բեկը», հ. VI, № 151, «Հղեննի կըկանչի...», հ. VII № 154 և այլն):

Հայոց իրապատում հեքիաթներում հաճախ հանդիպող թեմաներից է նաև պանդխտությունը: Ժողովրդի սոցիալական ծանր կյանքի պատճառով մշտական կենսակերպ դարձած այս երևույթի բանահյուսական արծարծումները հայ ժողովրդի դասական տարբեր ժանրերի ստեղծագործությունների անբաժանելի մասն են կազմում: Իրապատում հեքիաթներում այն հիմնականում ձուլվում է հեքիաթի ավանդական՝ դեռևս հրաշապատում հեքիաթից հայտնի կառույցներին՝ հերոսի մեկնում և վերադարձ, և այլ ժողովուրդների հեքիաթներում տարբեր պատճառաբանումներ ունեցող հերոսի մեկնումը հիմնականում կապվում է պանդխտության հետ:

Պանդխտության թեման մեծ մասամբ ի հայտ է գալիս հայոց մեջ շատ տարածված հետևյալ սյուժեներում:

Հերոսը ամուսնության հաջորդ օրը մեկնում է պանդխտության: Քսան տարի հետո վերադառնալով տուն՝ նա կնոջ անկողնում մի (կամ երկու) երիտասարդ է գտնում: Կարծելով, թե երիտասարդը կնոջ սիրելեկանն է՝ նա սպանում է երկուսին էլ, հետո իմանում, որ կնոջ հետ իրենց որդին է եղել: Այլ տարբերակներում, հետևելով նախօրոք իրեն տրված խորհրդին, մարդը պարզում է իսկությունը և խուսափում աղետալի հետևանքներից («Իրեք դի հեքիաթը»³⁵, «Կնկանը հինարը», VII, № 33, «Տղան հորը ճնանչում չի», հ. VII, № 181 և այլն): Այս դիպաշարը հայկական հեքիաթացանկում թերևս ամենից շատ հանդիպողներից է, որ կըցվում է ամենատարբեր սյուժեների:

Մեկ այլ հեքիաթում պանդուխտության գնացած ընկերներից մեկը վերադարձի ճանապարհին սպանում է մյուսին, վերցնում նրա ունեցվածքը, գնում գյուղ: Սակայն դավաճան ընկերը հետագայում անպայման պատժվում է («Խատիսըզ մուֆթասըզ տաղլար և շահարի վար, շարիաթի յոխ», հ. IX, № 23, «Կրմոն ու Դրմոն», հ. X, № 47): Պանդուխտը, չիմանալով ում պահ տալ վաստակած փողերը, որպեսզի չծախսի և հայրենիք վերադառնալու ժամանակ վերցնի, դիմում է ազնիվ մարդու համբավ ունեցող մուլլային: Անազնիվ մուլլան խաբում է տղային և չի վերադարձնում փողերը: Սրամիտ հերոսի կամ արդարադատ թագավորի օգնությամբ հերոսը ետ է ստանում իր գումարը («Մուլլեն պար կյանը», հ. VII, № 128, «Տավա՛մ, տավա՛մ, տավա՛մ», հ. IX, № 26): Պանդխտության թեմայի հետ են կապված նաև շատ այլ հեքիաթներ:

Անկախ պետականության բացակայության պայմաններում օտար նվաճողների լծի տակ հեծող հայ ժողովրդի երազանքն է եղել ամուր և ուժեղ պետություն ունենալը: Որոշ իրապատում հեքիաթներում այդ ցանկությունը խիստ նպատակային ձև է ստանում. ժողովուրդը խորհրդածում է այդպիսի պետություն ստեղծելու

³⁵ Տե՛ս Ռ-ախա Խաչատրյան, Թալին, ՀԱԲ, հ. 19, Եր., 1999, էջ 49-51, № 5:

միջոցների մասին, որն է՝ հզոր և հայրենասեր զորավարներով բանակ ունենալը (այս գաղափարն է արտահայտված, օրինակ, «Էրկու թագավորի մասալեն» (հ. X, № 70) հեքիաթում), և կարոտով է հիշում իր հզոր թագավորներին («Ազգային հեքիաթ», հ. VIII, № 137):

Ինչպես արդեն նշվեց, ազգային կյանքի պատկերները առավել բնորոշ են արտացոլվում ուշ շրջանում ստեղծված իրապատում հեքիաթներում, որոնք իրականության պատկերման եղանակով բավական տարբերվում են դասական իրապատում հեքիաթներից և մոտենում են պատմվածքի ժանրին: Եվ դա բնական է, քանի որ հենց իրապատում հեքիաթն է պատմականորեն նախորդել պատմվածքի ու նովելի ժանրերին³⁶: Այսպես, օրինակ, Մուշ-Բուլանխի որոշ հեքիաթներ բավական իրապաշտ գծերով արտացոլում են հայ ժողովրդի՝ XIX դարավերջի և XX դարակեսի պատմա-քաղաքական կյանքի պատկերները: Հեքիաթներից մեկը՝ «Վասվասա Մխոն», որ համեմատաբար նոր ժամանակներում ստեղծված հեքիաթ է, պատկերում է թուրքերի իշխանության տակ գտնվող արևմտահայերի ողբերգական դրությունը: Հերոսը՝ ժամանակաշրջանի համար տիպական մի կերպար՝ դրությունից օգտվող Վասվասա (մատնիչ) Մխոն, իր ազգակիցներին մատնելով թուրք իշխանավորներին և շատերի բանտարկման, աքսորման ու մահվան պատճառ դառնալով, գյուղի ռես է կարգվում: Ավելի ուշ արևմտահայ գաղթականների հետ Թիֆլիսում ապաստանած Մխոն սպանվում է հոր մահվան համար վրեժ լուծող հայ երիտասարդի ձեռքով (հ. X, № 41):

Մեկ ուրիշ հեքիաթում՝ «Կիսրար արտում» (հ. X, № 59), պատկերվում է թուրքական դատարանի անարդարացի վերաբերմունքը հայերի նկատմամբ: Քուրդը ուզում է անագնվորեն տիրանալ հայի ցանած և աճեցրած ցորենի արտի կեսին, և շարիաթի օրենքները նրան օգնում են այդ հարցում:

Ինչպես տեսնում ենք, անհավանական արկածներով լեցուն իրապատում հեքիաթը աստիճանաբար դառնում է առավել իրական և հավանական: Այս հեքիաթներում արդեն նկատելի ռեալիստական գծերով են կերտված հայոց կյանքից վերցված պատկերներն ու կերպարները: Նման հեքիաթները համեմատաբար քիչ են հանդիպում հայ իրապատում հեքիաթագանկում և աչքի չեն ընկնում տարբերակների առատությամբ:

Ամփոփենք.

1. Իրապատում հեքիաթը, ի տարբերություն հեքիաթի մյուս տեսակների, իրականությունը պատկերում է իրական աշխարհում և զուտ մարդկային հարաբերությունների շրջանակներում, հետևաբար նրան խորթ է իրականության այլաբանական պատկերումը:

2. Իրապատում հեքիաթներին հատուկ է իրականության նկատմամբ ընդգծված քննադատական վերաբերմունքը, որը երգիծական հեքիաթներում արտահայտվում է սուր ծաղրով:

3. Հնագույն ժամանակներում ստեղծված իրապատում հեքիաթները արտացոլում են մարդկության վաղ շրջանի աշխարհայացքի կարևորագույն շրջափուլերից մեկը:

4. Կյանքի արտացոլման տեսակետից իրապատում հեքիաթը ժամանակագրական ընդարձակ տարածք է ներառում՝ խիստ արխաիկ շերտերին զուգահեռ ներառելով մերօրյա իրականությանը բնորոշ երևույթներ: Առավել ուշ շրջանում ստեղծված իրապատում հեքիաթները հարուստ են ազգային իրականության տարրերով՝ կենցաղի, հասարակական հարաբերությունների, սովորույթների,

³⁶ Այս մասին տե՛ս **Е. М. Мелетинский, Историческая поэтика новеллы, М., 1990, էջ 8-29:**

հավատալիքների՝ հեքիաթին բնորոշ արժարժույթներով, ինչպես նաև պատկերացում են տալիս ազգային բնավորության և հոգեկերտվածքի մասին, որոնցով պայմանավորված է իրապատում հեքիաթի ազգային նկարագիրը:

Միջազգային սյուժեներով հարուստ իրապատում հեքիաթներում ազգային իրականությունը դրսևորվում է երկու եղանակով. կամ ազգային կյանքի ուղղակի արտացոլումներով, և կամ միջազգային սյուժեների՝ տվյալ ազգի հեքիաթացանկին հարազատ տարբերակների առատությամբ:

Իրականության արտացոլման եղանակի աստիճանական փոփոխությունը՝ անհավանականից դեպի հավանական ու ռեալիստական պատկերումը, աստիճանաբար իրապատում հեքիաթը մոտեցնում է նովելի և պատմվածքի տեսակներին, որոնք պատմականորեն հաջորդում են նրան:

Н. Х. ВАРДАНЯН - Бытовая сказка и действительность. - Основываясь на реальной действительности, разные виды сказки по-разному отражают ее. Бытовой сказке свойственно не аллегорическое, остро критическое, сатирическое отражение действительности.

В аспекте отражения исторической действительности бытовая сказка охватывает довольно широкое временное пространство. Поскольку ее сюжеты созданы в разные времена, с ранних времен до наших дней, следовательно, в них наряду с архаическими слоями имеются явления, свойственные нашей действительности. Сюжеты, созданные в поздние времена, богаты компонентами национальной действительности, благодаря которым бытовая сказка отличается от других видов сказок как самая национальная.

По методу отражения действительности значительно отличаются сюжеты раннего и сравнительно позднего происхождения. Если первые изобилуют необыкновенными приключениями и в них большее место занимает фантастический вымысел, то последние близки к реальности. Сюжеты более позднего происхождения уже достаточно близки к литературной новелле и рассказу, которые и исторически следуют бытовой сказке.